ՀԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՕՍԻԱՅՈՒՄ (ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ, ՄՈԶԴՈԿ)[1]

Արսեն Հակոբյան

2002թ. մարդահամարի տվյալներով՝ Հյուսիսային Օսիայում բնակվում են 17147 հայ, որոնց գերակշռող մասը բնակվում է Վլադիկավկազում և Մոզդոկում: Ըստ պաշտոնական տվյալների՝ հայերը օսերից, ռուսներից և ինգուշներից հետո թվաքանակով չորրորդն են: Իսկ, ընդհանուր առմամբ, ըստ 2002թ. մարդահամարի՝ հանրապետությունն ունի 710275 բնակիչ, որից 445310-ը՝ օսեր, 164734-ը՝ ռուսներ, 21442-ը՝ ինգուշներ են:

Ակնհայտ է, որ ներկա իրողությունների, ՀՀ-ից արտագաղթի մեծ ծավալների, ոչ պաշտոնական միգրացիայի պայմաններում՝ հայկական բնակչության իրական թիվն, ըստ էության, ավելին է, քան վավերացված է մարդահամարում: Հնարավոր է, որ հայերը նույնիսկ երրորդ տեղը զբաղեցնեն:

Հյուսիսային Օսիայում հայկական բնակչության առկայությունը կապված է միգրացիոն մի քանի հոսքերի հետ: Արդեն 18-րդ դարում այստեղ հաստատվում են հայկական առաջին խմբերը (Մոզդոկ, Վլադիկավկազ), երբ Ռուսական կայսրությունն իր դիրքերը Հյուսիսային Կովկասում ամրապնդելու համար նպատակաուղղված քաղաքականություն էր վարում այստեղ հիմնվող բնակավայրերը իրեն հավատարիմ բնակչությամբ, այդ թվում և հայերով, բնակեցնելու ուղղությամբ:

Հետագայում պատմաքաղաքական զանազան գործոնների ազդեցությամբ եղան նաև այլ միգրացիոն հոսքեր: Վերջինը կապված էր ղարաբաղյան դեպքերի կապակցությամբ Ադրբեջանի փախստականների հոսքի և ՀՀ-ից արտագաղթի հետ:

Նկատենք, որ այդ եղանակով Հյուսիսային Օսիայիում միայն հայերի և օսերի (ի հաշիվ Վրաստանից և Հարավային Օսիայից օս փախստականների) թվաքանակն է վերջին տարիներին աճել: Հանրապետությունում բնակվող մյուս բոլոր ազգությունների թվաքանակը նվազել է:

Օս-ինգուշական հակամարտությունը, չեչենական պատերազմը և այլ գործոններ իրենց հետևանքներն են թողել հանրապետության էթնոքաղաքական իրավիճակի վրա և կոնֆլիկտածին միտումների ռեալ վտանգ առաջ բերել: Ակնհայտ է, որ լարվածությունն

[1] Նյութը գրվել է անմիջական դիտարկումների հիման վրա, 2004թ. օգոստոսին Հս. Կովկասում եղած ժամանակ:

ավելի է աճել բեսլանյան իրադարձություններից հետո, և այդ համատեքստում ռուսաստանյան ԶԼՄ-ում բավական հաճախակի են դարձել օսերի շրջանում հակահինգուշական տրամադրությունների աճի մասին հրապարակումները: 2004թ. աշնանը հանրապետությունն ապրում էր, ըստ էության, ռազմական դրության պայմաններում, և իշխանական ողջ ռեսուրսը կենտրոնացված էր «վրեժի» գործողությունների կանխմանը: Իսկ 2004թ. աշնանը Վերին Լարսի «փակման» պայմաններում Հյուսիսային Օսիայում էին կենտրոնացել ՀՀ եկող հիմնական ավտոշարասյուները:

Այս ամենն ակնհայտ է դարձնում տարածաշրջանի և տեղի հայության խնդիրների նկատմամբ ՀՀ ուշադրության և քաղաքականության անհրաժեշտությունը:

Ինչպես ցույց են տալիս դեռևս 2001թ. հետազոտությունները, Հյուսիսային Օսիայի հայության մոտ դրսևորվում են տագնապներ ընդհանուր լարվածության և առկա միտումների շուրջ, թեև բազմամյա գոյության ընթացքում բարիդրացիական հարաբերությունների հարուստ ավանդույթներ են ձևավորվել տեղի հայերի և տեղական բնակչության միջև:

Վլադիկավկազում առ այսօր հիշատակվում է Հայկական թաղամասը, կա Հայկական փողոց, գործում է Սբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցին: Հայկական թաղամասը, փողոցը, եկեղեցին գտնվում են քաղաքի կենտրոնում: Ուշագրավ է, որ ստալինյան տարիներին Կենտրոնի կառուցապատման ժամանակ խնդիր էր դրվել քանդել եկեղեցին, բայց դա այդպես էլ չի իրականացել: Եկեղեցին գործել է նույնիսկ խորհրդային տարիներին:

1989թ. կազմակերպվում է Վլադիկավկազի հայերի «Նաիրի» ազգային ակումբը՝ լեզվի, պատմության, մշակույթի խնդիրներով մտահոգ ու նախանձախնդիր անհատների կողմից: Շուտով այն վերակազմավորվում է «Էրեբունի» ազգային-մշակութային կենտրոնի, որը զբաղվում է Օսիայի տարածքում բնակվող հայերի խնդիրներով: Կենտրոնը մտնում է ազգային այլ համայնքները միավորող «Մեր Օսիա» շարժման մեջ, որի միջոցով ակտիվ գործունեություն է ծավալվել ռեգիոնում և հանրապետությունում ծայրահեղական դրսևորումների կանխման ուղղությամբ[1]:

Կենտրոնը եռանդուն մշակութային գործունեություն է իրականացնում՝ կազմակերպելով տարբեր միջոցառումներ: Գրասենյակում գործում է հայոց պատմության և լեզվի դասընթաց, կա գրադարան՝ մոտ 3000 կտոր գրականությամբ: Գրականություն ստանում են նաև ՀՀ ԿԳ նախարարությունից:

«Էրեբունին», որ այժմ գլխավորում է երիտասարդ և եռանդուն Ալբերտ Շամիլյանցը, ակտիվ աշխատում է նաև ՌԴ այլ հայկական համայնքների հետ կապեր հաստատելու

[1] «Էրեբունի» ազգային-մշակութային, բարեգործական կազմակերպություն
ՌԴ, Հյուսիսային Օսիա-Ալանիայի Հանրապետություն, Վլադիկավկազ, Գապո Բանի 16
Հեռ. /8-8672/ 53-78-99, e-mail: erebuni-alania@mail-ru
Նախագահ՝ Ալբերտ Հակոբի Շամիլյանց, փոխնախագահ՝ Կարապետ Մաթևոսի Գյուրջյան

ուղղությամբ։

Խնդիրները

1. Ըստ էության, «Էրեբունի» ազգային կենտրոնը վերածվել է Հայաստանի ոչ պաշտոնական ներկայացուցչության, քանի որ տարբեր բնույթի խնդիրներ է լուծում և աջակցություն ցուցաբերում Հյուսիսային Օսիայում հայտնված ՀՀ քաղաքացիներին (փաստաթղթերի թարգմանություն, դրամական, ոստիկանության հետ կապված խնդիրներ…)։ Մեր հայրենակիցների այս հատվածը, նրանց վարքագիծը, ըստ համայնքի պատասխանատուների, բացասաբար է անդրադառնում հայերի դրական կերպարի վրա։ Դա բավական մտահոգիչ է և պետք է լուրջ մոտենալ, քանի որ տարածաշրջանում մշտապես առկա է ազգամիջյան հարաբերությունների լարվածության սպառնալիք, որը կարող է տարածվել նաև մեր հայրենակիցների՝ թե՛ հնաբնակների, թե՛ նոր արտագաղթածների վրա։ Բեսլանի իրադարձություններից հետո խնդրի հրատապությունն ընդգծվում է։

2. Վլադիկավկազում չի գործում հայկական դպրոց։ Հայերենը չի դասավանդվում նույնիսկ որպես ֆակուլտատիվ առարկա։ Համեմատության համար նշենք, որ թեև հայերից անհամեմատ քիչ վրացիներ են ապրում Վլադիկավկազում, սակայն քաղաքում կա վրացական դպրոց, իսկ ընդհանրապես Հս. Օսիայում ազգային դպրոցներ ունեն նաև կումիկներն ու կաբարդինները, որոնք նույնպես թվաքանակով քիչ են։ Եկեղեցուն կից գործում է կիրակնօրյա դպրոց, հայերենի դասընթաց կա նաև «Էրեբունի» կենտրոնում, սակայն հաճախելիությունը քիչ է։ Համայնքի գերակշիռ մասը, չհաշված վերջին տարիներին այնտեղ հաստատված մեր հայրենակիցներին, ռուսախոս է։

3. «Էրեբունի» կենտրոնն ունի երիտասարդական բաժին։ Անհրաժեշտ է կապեր հաստատել նրանց հետ, որպեսզի համայնքի երիտասարդները մասնակցեն ՀՀ-ում անցկացվելիք տարբեր համահայկական ու երիտասարդական միջոցառումներին։

Լուծման հնարավորությունները

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով վերը նշված խնդիրները, ինչպես նաև այն, որ Հյուսիսային Օսիայով են անցնում ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող մայրուղիները (Ռազմավարական, Ռազմաօսական ճանապարհները), որոնք ՌԴ-ն կապում են Հայաստանի հետ, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այդ տարածաշրջանին։

Համայնքի պատասխանատուները նշեցին, որ անհրաժեշտ ու հրատապ է ՀՀ կառավարական, պետական ներկայացուցչության ինչ-որ ձև գտնել Հյուսիսային Օսիայում։ Խնդրի լուծման ուղիներից կարող է լինել կապերի հաստատումը Հս. Օսիայի և ՀՀ պետա-

կան մարմինների միջև, կառավարական այցելությունները՝ նվազագույնը՝ փոխնախարարի մակարդակով, հեռախոսազանգերը և այլն[1]։

Դա բարենպաստ ֆոն կստեղծի նաև տեղի հայության համար։ Իրենք պատրաստ են լուծելու համայնքի առջև ծառացած խնդիրները, սակայն ՀՀ կողմից նման քայլերի ձեռնարկումը, բարոյական աջակցությունը, մեծապես կդյուրացնեն դա և կամրապնդեն համայնքի հեղինակությունը։

Նկատենք, որ խնդիրը միայն Վլադիկավկազով չի սահմանափակվում, քանի որ Հս. Օսիայի մեկ այլ խոշոր քաղաքում՝ Մոզդոկում նույնպես մի քանի հազար հայ է ապրում։ Եվ վերը թվարկված քայլերը ՀՀ կողմից հնարավորություն կտան համալիր կերպով ուշադրության կենտրոնում պահել Հյուսիսային Օսիայի հայկական բնակչությանը։

Ընդ որում, Մոզդոկի քաղաքապետը, ուժային համակարգի ղեկավարները (ԱԴԾ ղեկավար, զինկոմ և այլն) ազգությամբ հայեր են։ Հայերը նաև տնտեսական կարևոր դիրքեր են զբաղեցնում։ Համայնքում գործում է Ռուսաստանի հայերի միության տեղական մասնաճյուղը, որը գլխավորում է Ռաֆիկ Վարդանովը՝ նախկինում Հս. Օսիայի խորհրդարանի անդամ։ Նա ջանքեր է գործադրում Մոզդոկի հայությանը համախմբելու և համայնական կյանքը կազմակերպելու ուղղությամբ։

Մոզդոկում նույնպես հայկական դպրոց չկա, չի դասավանդվում նաև հայերեն։ Ռ.Վարդանովի ջանքերով համայնքի գրասենյակում կիրակնօրյա դպրոց է բացվել։ Հայկական եկեղեցին ժամանակավորապես տրվել է ռուսներին, մինչև վերջիններս կկառուցեն իրենց եկեղեցին։ Այն ռուսներին տալու հարցում դեր է խաղացել նաև եկեղեցու ծախսերի խնդիրը, այնուամենայնիվ, վերջիններս ընդունում են եկեղեցու՝ հայերին պատկանելը։ Եկեղեցու բակում վերջերս համայնքի նախաձեռնությամբ Մեծ եղեռնի զոհերին նվիրված հուշաքար է դրվել։

Ըստ էության, Մոզդոկի համայնքի, իշխանությունների հետ պետական մակարդակով կապերի հաստատումը, շփումները նույնպես կարևոր դեր կունենան տեղի հայության, նոր արտագաղթածների խնդիրները ՀՀ ուշադրության կենտրոնում պահելու, դրանց լուծմանն ուղղված քայլերի ձեռնարկման գործում։

Խնդրի կարևորությունն ընդգծվում է նրանով, որ Մոզդոկը, Վլադիկավկազը հաղորդակցային կարևոր հանգույցներ են, որոնցով անցնում են ՌԴ-ն ՀՀ-ի հետ կապող ճանապարհները։ Մոզդոկը նաև երկաթուղային և օդային խաչմերուկ է։ Հետևաբար, տարածաշրջանը և տեղի հայության խնդիրները ՀՀ-ի համար ձեռք են բերում առանձնահատուկ

[1] Հս. Օսիայում նախագահի մակարդակով ինչ-որ խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ է, որպեսզի պատվիրակությունը լինի նվազագույնը փոխնախարարի մակարդակով։ Օրինակ՝ քաղաքի կենտրոնում հայկական համայնքի կենտրոնի տարածքի սեփականաշնորհման գործընթացը բավական դյուրին կլիներ ՀՀ և տեղական իշխանությունների միջև կապերի պայմաններում։

ռազմավարական նշանակություն:

Հայոց լեզվի դասավանդման խնդիրը ՌԴ Ստավրոպոլի մարզի Եդեսիա հայկական գյուղում

Մոզդոկից մոտ 40կմ հյուսիս, ՌԴ Ստավրոպոլի մարզում է գտնվում Եդեսիա հայկական գյուղը, որ ունի մոտ 6000 բնակիչ: Հարևան բնակավայրերում նույնպես ապրում են եդեսիացիներ, և նրանց փաստական թիվն ավելին է: Համայնքն ապրում է «փակ» մշակութային կենսակերպով, որում պահպանվել են ավանդական կենցաղին բնութագրական շատ գծեր: Դա ինքնին հետաքրքիր և ուսանելի օրինակ է, թե ինչպես ապրելով բազմադարյա սփյուռքային պայմաններում, ենթարկվելով լեզվական ձուլման՝ խումբն իր ավանդական մշակութային համակարգի «պահածոյացման» միջոցով պահպանում է էթնիկ ինքնագիտակցությունը:

Գյուղի բնակիչները 18-րդ դարի վերջին գաղթել են Հարավային Դաղստանից և ներկայիս Ադրբեջանի հյուսիսարևելյան շրջաններից (Ղուբա, Դիվիչի…): Այդ ժամանակաշրջանում գաղթած հայ բնակչության մի մասն էլ հաստատվում է Ղզլարում, Սբ Խաչում (ներկայիս Բուդյոնովսկ):

Դաղստանի հարավում և Այսրկովկասի հյուսիսարևելյան շրջաններում հայկական այս բնակչության առկայությունը պայմանավորված էր վաղմիջնադարյան իրողությունների հետ, երբ 6-րդ դարում Սասանյան Խոսրով Անուշիրվան թագավորը Դերբենդի անցքը պաշտպանելու նպատակով մեծ թվով իրանական բնակչություն է բնակեցնում այս տարածքներում՝ նրանց հետ միասին նաև հայ վերաբնակիչներ տեղափոխելով Սյունիքից: Հայկական զինվորական բնակչության, ինչպես և իրանական վերաբնակիչների համար պարսից արքունիքը սոցիալական արտոնյալ պայմաններ և կարգավիճակ է սահմանում: Փոքրամասնություն ներկայացնող, սակայն սոցիալական բարձր կարգավիճակ ունեցող հայկական այս խումբը, շարունակ գոյատևելով բազմադարյա իրանական գերակայության պայմաններում, ենթարկվում է լեզվական ձուլման գործընթացների, դառնում իրանալեզու, թաթախոս, սակայն պահպանում է հայկական ինքնագիտակցությունը, մշակութային նկարագիրը, դավանանքը: Հետագայում 11-12-րդ դդ. Արևելյան Այսրկովկասում սկիզբ առած թրքացման գործընթացների հետևանքով նրանց մոտ տարածում է ստանում նաև թրքախոսությունը՝ առավելապես որպես ազգամիջյան հաղորդակցության լեզու: Խմբի մոտ մինչև 19-րդ դարը հիմնականում տարածված էր թաթերեն-թուրքերեն երկլեզվությունը: Ըստ էության, որոշ մասի մոտ՝ թուրքերենի արդեն առավել ամուր դիրքերով, քանի որ Հարավային Դաղստանում և մերձկասպյան գոտում թուրքական էթնո-

մշակութային ազդեցությունը 18-րդ դարում գերակայում էր: Վերլուծությունը ցույց է տալիս, որ խումբը պատմական զարգացումների ընթացքում ենթարկվել է լեզվական ձուլումների շարունակական գործընթացների (իրանալեզվություն, թրքալեզվություն)[1]:

Ներկայումս Եդեսիայի բնակիչները թրքախոս են: Կենցաղում գործածում են թուրքերեն, «դրսի» հետ շփվելիս՝ ռուսերեն: Հայերեն գիտեն հատուկենտ ծերեր[2]: Մինչև 1944թ. Եդեսիա գյուղում գործել է հայկական դպրոց, սակայն պատերազմի և հետագայում ուսուցչական կադրեր չլինելու պատճառով այն փակվել է: 1990-ական թթ. սկսած՝ փորձ է կատարվել նորից ներդնել հայերենի ուսուցումը, սակայն այն չի ստացվել՝ կրկին կադրային խնդրի պատճառով:

Գյուղի բնակչությունը, ակտիվը նախանձախնդիր են հայոց լեզվի ուսուցումը դպրոցում վերականգնելու և կայուն հիմքերի վրա դնելու գործում: Թեև այն ուսումնական ծրագրերից չի հանվել, սակայն դասընթացը փաստացի չի գործում: Առարկան ուսումնական ծրագրից հանելու դեպքում, ինչպես մեզ ասացին այնտեղ, շատ դժվար կլինի կրկին այն վերականգնելը:

Գյուղը պատրաստ է և ջերմեռանդորեն ցանկանում է հայոց լեզվի ուսուցիչ ունենալու համար երիտասարդ(ներ) գործուղել Երևան: Նման փորձ եղել է, սակայն սովորելու ուղարկված աղջիկը Երևանում ամուսնացել է: Մինչ այդ, սակայն, խիստ հրատապ է այնտեղ հայոց լեզվի ուսուցիչ գործուղելու խնդիրը:

Հետագայում այս քայլերը ձեռնարկելու պարագայում, ինչպես նշեցին եդեսիացիները, կարելի է դպրոցը ազգային դարձնել՝ հայոց լեզվի, գրականության, պատմության պարտադիր ուսուցմամբ:

Համայնքի կազմակերպվածության, ոգու մասին է խոսում այն փաստը, որ 1990-ական թթ. համայնքը գյուղի Սբ Աստվածածին եկեղեցու համար քահանա ունենալու նպատակով, երիտասարդ է ուղարկում Գևորգյան ճեմարան՝ սովորելու, և վերադառնալուց հետո արդեն իսկ անվանակոչված Տեր Խաչատուրը հովվություն է անում համայնքում: Մտածում են երկրորդին գործուղել ճեմարան:

Եդեսիայի բնակչության՝ մայրենի լեզուն սովորելու նախանձախնդրությունը կարիք ունի ամենայն աջակցության, հակառակ դեպքում մենք կունենանք հայությունից օտարված մի ստվար բեկոր, որն աստիճանաբար կհեռանա ակունքներից ու կձուլվի ռուսաստանյան միջավայրում:

Ներկա իրադրությունն այնպես է, որ կողմերից որ մեկն ակտիվ աշխատի, նրանն էլ

[1] Խմբի մասին միակ պատմաազգագրական հետազոտությունը կատարվել է մեր կողմից (Ա. Հակոբյան, «Թաթախոս հայեր» թեկնածուական ատենախոսություն):

[2] Գյուղում գտնվելու ընթացքում նրանք զրույցի էին բռնվում մեր (Ա. Հակոբյան, Տ. Դալալյան) հետ՝ ասելով. «Կարոտել ենք հայերենին, մի քիչ խոսեք»:

«կլինի» Ստավրոպոլի մարզի և Հյուսիսայի Օսիայի սահմանների մերձակայքում բնակվող ավելի քան 6000 հայ բնակչությունը: Հայության այս ինքնատիպ բեկորի կողմնորոշումն ու հայացքն այժմ ուղղված է Հայաստանին, և նրանց առաջնահերթ խնդիրը հայոց լեզվի ուսուցիչ ունենալն է:

Կարևոր է նաև զանազան կապերի ու հարաբերությունների հաստատումը Եդեսիայի հետ, տեղի բնակչության ընդգրկումը մշակութային, կրթական, հասարակական տարբեր նախաձեռնություններում և ծրագրերում:

Ընդգծենք, որ համայնքը բավականին կազմակերպված է, հստակորեն գործում են միմյանց օգնելու, աջակցելու նորմերը, իսկ էթնոքաղաքական բարդ միջավայրում գոյատևելու պատմական փորձը ներկայումս նոր երանգավորումներ է ստացել՝ դառնալով կոնֆլիկտածին տարածաշրջանում բնակվելու անհրաժեշտ պայման[1]:

[1] Օրինակ՝ 1990-ական թթ. վերջին վահաբականներն առևանգել էին տեղի երեխաներից մեկին՝ գումար ստանալու պահանջով: Ի պատասխան դրա՝ եդեսիացիները փակել էին Չեչնիա գնացող դաշնային և տեղական ճանապարհները՝ պատանդ վերցնելով չեչեն ուղևորներով մեկ ավտոբուս: Գործին խառնվում են դաշնային իշխանությունները՝ վարչապետ Ստեպաշինը, զինվորականներ: Ի վերջո, մեծ դժվարությամբ համոզում են եդեսիացիներին ազատել պատանդներին՝ խոստանալով լուծել երեխայի ազատման խնդիրը: Իշխանություններին դա, իհարկե, չի հաջողվում, և վերջում մեծ գումարի դիմաց ընտանիքն է ազատում տղային, որին, ի դեպ, գերության ընթացքում որևիցե վնաս չէին տվել: